ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

(առարկա)

Թեմա՝ Սովորողի արժեհամակարգի ձևավորմանն ուղղված քայլերը Հայոց լեզվի դասաժամերին

Կազմեց՝ Մերի Հախյան

(անուն ազգանուն)

Ագարակի Ա. Վ. Սարդարյանի անվան հ/դ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ **Լուսինե Սողոմոնյան**

‘Կապանի N2 ավագ դպրոց’ ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բովանդակություն

Ներածություն 3

Սովորողի արժեհամակարգի ձևավորմանն ուղղված խայլերը Հայոց լեզվի դասաժամերին 6

Եզրակացություններ 18

Օգտագործված գրականության ցանկ 19

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Այժմ գիտությունը մեծ թափով զարգանում է, և բնական է, որ զարգանում է նաև կրթական ոլորտը. փոխվում են կրթական ոլորտին ներկայացվող պահանջները: Լուրջ աշխատանք է տարվում ուսուցման աշակերտակենտրոն համակարգ ձևավորելու համար: Աշակերտակենտրոն ուսուցումը թույլ է տալիս ավելի նպատակային և ավելի արդյունավետ դարձնել ուսուցման գործընթացը: Գիտակցվում է նաև այն փաստը, որ ուսուցումը ոչ թե սոսկ գիտելիքներ ամբարելու գործընթաց է, այլ միջոց՝ գիտելիքները ինքնուրույնաբար ձեռք բերելու, ինքնակրթության կարողություններին տիրապետելու, սովորողին հասարակությանը պիտանի անհատ դարձնելու համար: Այսինքն՝ ուսուցիչը դասարանում պետք է ունենա միայն ուղղորդողի դեր, ով սովորեցնում է սովորել:

Որևէ թեմայի ուսուցման մեթոդիկան մշակելիս հարկավոր է հաշվի առնել ուսուցման ժամանակակից հետազոտությունների արդյունքները, պետք է քայլել ժամանակին համընթաց: Այժմ կրթական համակարգի գլխավոր գործառույթը պետք է լինի վերարտադրողական հմտությունների, վերաբերմունքի, արժեքների ուսուցումը: Ուսուցման գործընթացը կարգավորվում է կրթական չափորոշչով, որը նշում է այն բոլոր պահանջները, որ դրվում են ինչպես ուսուցչի, այնպես էլ աշակերտի առջև:

Կրթական չափորոշիչը առաջարկում է հայոց լեզվի և գրականության ուսուցումը կառուցել հետևյալ սկզբունքով.

Ժողովրդավարական. սովորողը մասնակցում է ուսումնառության պլանավորմանը և դրա իրականացման գործընթացին, նրա կարծիքի և հետաքրքրությունների հիման վրա են ծրագրվում նյութի բովանդակությունը, մշակվում ընթացիկ աշխատանքները:

Անձնակենտրոն կամ սովորողակենտրոն ուսումնառություն. սովորողն ինքնուրույն է, աշխատում է հիմնականում դասարանում՝ ուսուցչի և ընկերների հետ համագործակցելով: Ուսումնառության

գործընթացում շեշտադրվում են սովորողի անհատականությունը, անձնային ներդաշնակ զարգացումը, սովորելու ոճը, հետաքրքրությունների և կարիքների շրջանակը: Սովորողը նախագծում և իրականացնում է տարաբնույթ հետազոտություններ:

Տարբերակված ուսուցում. ուսումնառության բովանդակությունը, կրթական միջավայրը, տրվող առաջադրանքները, չափորոշչային պահանջները ձևավորվում են՝ հաշվի առնելով սովորողի անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունները, պահանջները, կարողունակությունները[1]:

Այս ամենը ենթադրում է կրթական գործընթացի այնպիսի ընթացք, որը կնպաստի սովորողի համապատասխան հմտությունների ու արժեհամակարգի ձևավորմանը:

Թեման ամբողջովին արդիական է այնքանով, որ առաջարկվող կրթական չափորոշչով հստակ սահմանված են առարկայական գիտելիքից զատ նաև կարողունակությունների, հմտությունների և արժեքների ուսուցումը: Սա ժամանակակից մանկավարժական պահանջն է, որը դեռևս լիովին չի իրացվում: Ուստի հարկավոր է մշակել մեթոդական այնպիսի համակարգ և ռազմավարություն, որը կօգնի խնդրի լուծման ճանապարհին:

Հետազոտության նպատակը: Դպրոցում արժեհամակարգի ձևավորմանն ուղղված արդյունավետ մեթոդների բացահայտումն ու հնարավորությունների գնահատումը:

Հետազոտության խնդիրները՝

- **ուսումնասիրել** ժամանակակից մեթոդներն ու դրանց հնարավորությունները,
- **տարբերակել** արժեհամակարգի ձևավորմանը նպաստող մեթոդներն ու ռազմավարությունները,
- **նկարագրել** մեթոդների հիմնական բովանդակությունն ու տված հնարավորությունները,
- **կիրառել** ընտրված մեթոդները դասի համապատասխան փուլում,

[1] Հայոց լեզու ծրագիր հանրակրթական դպրոցի 7-12-րդ դասարանների համար, https://escs.am/files/files/2020-07-17/0c0bec6bd1b12c6389919925ac049d7e.pdf:

- **արձանագրել** արդյունքները,
- **որոշել** արդյունավետության չափը:

Մեր հետազոտությունն իրականացնելու ենք Ագարակի Ա. Վ. Սարդարյանի անվան հիմնական դպրոցում, 9-րդ դասարանում: Ընտրելու և կիրառելու ենք արժեհամակարգի ձևավորմանն ուղղված որոշակի մեթոդներ՝ պարզելու համար, թե որքանով են արդյունավետ կիրառման մեջ, որքանով են հանգեցնում ցանկալի արդյունքին:

Սովորողի արժեհամակարգի ձևավորմանն ուղղված քայլերը Հայոց լեզվի դասաժամերին

Սովորողի համակողմանի զարգացման հիմքը արժեքային համակարգի ձևավորումն է, ազգային և համամարդկային արժեքների գիտակցումը: Մանկավարժական արժեքաբանության կիրառական տեսանկյունից այս դրույթը արտացոլվում է հանրակրթության կրթական չափորոշիչներում, ուսումնական ծրագրերում, ուսումնական պլաններում, դասագրքերում, դիդակտիկ և մեթոդական ուղեցույցներում: Դպրոցը անձի կրթության և դաստիարակության դարբնոցն է. այն սերնդից սերունդ փոխանցում է հասարակության մեջ կուտակված նյութական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական, բարոյական, գեղագիտական, ճանաչողական և այլ բնույթի արժեքներ: Սովորողի հոգեմտավոր ներաշխարհը ձևավորվում է ազգային և համամարդկային արժեքների գիտակցությամբ, իսկ այդ արժեքներն ընկած են մարդասիրական կրթության հիմքում: Սովորողի ճանաչողական արժեքները ձևավորվում են գիտելիքի միջոցով. մտորել-գնահատել–իմաստավորել-յուրացնել ճանաչողական արժևորման տրամաբանական քայլերը սկսվում են գիտելիքի փոխանցմամբ: Հետևաբար, գիտելիքը համարվում է առաջնային արժեք կրթական արժեհամակարգում: Անձի կրթվածություն ասելով՝ հասկանում ենք ոչ միայն գիտելիքների համակարգի տիրապետում, այլև ստեղծագործական ունակությունների դրսևորում, համագործակցային, ինքնաարտահայտման որակների առկայություն, արժեքային գիտակցություն[2]:

Սովորողի արժեքային կողմնորոշման, արժեքային գիտակցության, արժեքային վարքագծի ձևավորումը սկսվում է դեռևս տարրական դպրոցից և կրում շարունակական բնույթ: Երեխան դեռևս տարրական դպրոցից բացահայտում է գեղեցիկը, արդարը, սերը և նման համամարդկային արժեքներ, որոնք արմատավորվում են անհատի հոգևոր աշխարհում[3]: Միջնակարգ կրթության բովանդակային բաղադրիչները որոշակիացվում են՝ ըստ ուսումնական բնագավառների ու հանրակրթական դպրոցի աստիճանների՝ հաշվի

---

[2] Լ. Թորգոմյան, Մանկավարժության արժեքաբանության հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Եր., «Ան-Ջոն» հրատ.,2011, էջ 106-129:

[3] Ա.Գալստյան, Մ.Գյուրունյան, Հուշագրական նյութերի ուսումնասիրումը որպես կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման միջոց:

առնելով սովորողների զարգացման ֆիզիոլոգիական, հոգեբանական և ազգային առանձնահատկությունները[4]:

Ուսումնական առարկաների՝ այդ թվում հայոց լեզվի և գրականության ուսուցման գործընթացի վերջնարդյունքը պետք է ներառի հետևյալ բաղադրիչների ձևավորմանն ուղղված քայլերի համախումբ՝ գիտելիք, կարողություն և հմտություն, արժեքային համակարգ:

		ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ
ԳԻՏԵԼԻՔ	ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	Գործողություն վերաբերմունք վարք
Առարկայական գիտելիքներ	Ճանաչողական մեթոդներ Վերլուծում, մասնավորում, համադրում, վերացարկում, անդրադարձում, մակածում / ինդուկցիա/, արտածում / դեդուկցիա/, ընդհանրացում, կանխատեսում	Ձևավորում են անձ և քաղաքացի հետևյալ որակներով՝ ✓ հայրենասեր ✓ ազգասեր ✓ աշխատասեր ✓ բարոյական ✓ ազնիվ ✓ արդարամիտ ✓ ընկերասեր ✓ ծնողասեր ✓ մարդասեր ✓ հանդուրժող ✓ քաղաքակիրթ ✓ բարեկիրթ և այլն

Նշված բոլոր որակները անհրաժեշտ են անձ-քաղաքու ձևավորման համար, և դրանք լավագույնս հնարավոր է սերմանել հայոց լեզվի, հայ գրականության, ինչպես նաև մայրենիի ժամերին:

Սովորողի արժեհամակարգի ձևավորումը ներառում է դասին ներկայացվող պահանջների մեծ շղթա,

[4] Հայոց լեզու ,գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Եր., Անտարես, 2006, էջ 4-11 :

որոնցից յուրաքանչյուրի իրականացումը դասին ժամին որքան կարևոր ու անհրաժեշտ է, նույնքան էլ դժվար է: Ուստի պետք է մշակել մեթոդական մի ամբողջական համակարգ՝ ցանկանալի նպատակին հասնելու համար:

Արժեհամակարգից զատ կարևոր է նաև կարողունակությունների ձևավորումը: Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից: Միջնակարգ կրթության կարողունակություններն են՝

- լեզվական գրագիտություն և կարողունակություն,
- սովորել սովորելու կարողունակություն,
- ինքնահանձնաչողական և սոցիալական կարողունակություն,
- ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
- թվային և մեդիա կարողունակություն,
- մշակութային կարողունակություն,
- մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,
- տնտեսական կարողունակություն[5]:

Ուսուցիչների շրջանում հարցաթերթիկի միջոցով իրականացրինք հարցում՝ պարզելու, թե որքանով է ուշադրություն դարձվում սովորողի արժեհամակարգի ձևավորմանը հայոց լեզվի ժամերին, աշխատանք է

[5] ՀՀ կառավարության որոշումը հի կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի n 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, 09.02.2021, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149788:

տարվում արդյո՞ք դասագրքերի տեքստերի շուրջ, տրվում են արդյո՞ք լրացուցիչ նյութեր: Հարցումն անց ենք կացրել երեսուն ուսուցչի շրջանում: Արդյունքում ունեցանք հետևյալ պատկերը:



Հարցված ուսուցիչների մեծ մասը նպատակուղղված աշխատանք չի տանում արժեհամակարգի ձևավորման համար, կան նաև ուսուցիչներ, որոնք առհասարակ չեն զբաղվում դրանով, այլ կարևորում են

առարկայական գիտելիքի յուրացումը: Վերջինս կարծրատիպ է, որը հարկավոր է փոխել, քանի ապացուցված է, որ առարկայական գիտելիքի յուրացումից զատ ոչ պակաս կարևոր են նաև արժեքների և կարողունակությունների ձևավորումը, և առանց դրանց նույնիսկ չենք կարող ձևավորել հաջողակ և հասարակությանը պիտանի անհատ:

Միջին դպրոցում (5-րդ դասարան) մի ստվար բաժին հատկացված է առակներին. շուրջ 10 առակ: Առակները այլաբանորեն են ներկայացնում կյանքը ու տեսանելի օրինակներով ցույց են տալիս, թե որն է ճիշտն ու ընդօրինակելին, և որը՝ վատն ու մերժելին: Առակներն ուսումնասիրելիս պետք է կանգնել դրա խրատական նշանակության վրա: Դա կարելի է անել զրույցի միջոցով: Գրականության ժամերին առավել շատ է ուսուցչի հնարավորությունը արժեհամակարգի ձևավորմանն ուղղված աշխատանքներ անելու համար. գրական ստեղծագործությունները անսպառ նյութ են, որոնց շուրջ կարելի է անվերջ քննարկումներ անել ու խրատներ տալ, հերոսների օրինակով բացատրել ու սովորեցնել: Խնդիրը մի փոքր բարդանում է Հայոց լեզվի ժամերին: Այստեղ հարց է առաջանում. ինչպե՞ս և ինչի միջոցով ձևավորել սովորողի արժեհամակարգը, ի՞նչ ներառել դասին, որ այն համեմված լինի դաստիարակչական բովանդակությամբ: Ներկայացնենք մեթոդներ և մեթոդական հնարներ, որոնք կարող են նպաստել խնդրի լուծմանը և ստուգենք դրանց արդյունավետության չափը:

Իններորդ դասարանում ուսումնասիրում ենք «Բարդ նախադասություն» թեման: Այս թեման անցնում ենք չորս դասաժամով: Առաջին ժամին՝ **խթանման փուլում**, սովորողներին թեմայի յուրացմանը նախապատրաստելու համար, կիրառեցինք «Գուշակություն»[6] մեթոդական հնարը: Հեղինակի ներկայացրած այս մեթոդական հնարի մեջ ավելացումներ արեցինք, որպեսզի առարկայական գիտելիքի ընկալումը, հետաքրքրության խթանումը զուգակցվեն նաև որոշակի արժեքների ընկալմամբ: Նախապես կտրատել և առանձնացրել էինք բարդ նախադասությամբ արտահայտված առած-ասացվածքների հատվածները՝ դրանք

[6] Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 23-24:

բաժանելով բաղադրիչ նախադասությունների և թափցրել դրանք դասարանի տարբեր հատվածներում: Աշակերտները պետք է գտնեին դրանք և միացնեին համապատասխան հատվածները:

1. Մինչև չգա հետինը
2. Գայլի գլխին ավետարան կարդացին,
3. Աչքերը գնում են տեսնելու այն,
4. Անկուշտ մարդը նման է այն օձին,
5. Ինչ աղբրից, որ ջուր ես խմում,
6. Աշխատանքը սև է,
7. Օրենքն այնպիսի մի պարան է,
8. Ասա՝ ով է ընկերդ,
9. Ով չի հիվանդացել,

1. որ փղին էլ է ուզում կուլ տալ:
2. ինչ ականջները լսել են:
3. չի հիշվի առաջինը:
4. ասեմ՝ ով ես դու:
5. որ բարձրահասակները վրայից են շրջանցում, իսկ ցածրահասակները տակով են անցնում:
6. ասաց՝ շո՛ւտ արեք, ոչխարը սարը անց կացավ:
7. հացը՝ սպիտակ:
8. առողջության արժեքը չի

Համապատասխան հատվածները գտնելով և իրար միացնելով՝ աշակերտները հասկանում են, որ բարդ նախադասությունը բաղկացած է մեկից ավելի պարզ նախադասություններից, որոնցից որոշները կարող են անջատ գործածվել, որևէ կախում չունեն այլ նախադասությունից, իսկ ահա որոշներն էլ կախման մեջ են մեկ այլ նախադասությունից: այս ամենից զատ աշակերտները մեկնաբանում են ասացվածքները, դրանց տալիս գնահատական, յուրացնում որոշակի արժեքներ: Հետաքրքրական մեթոդական հնար է «Մեջբերումներ» հնարը: Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն: Օրինակ.

Բարոյականությունն այնպիսի բան է, որը մեզ այլ բաներից ավելի շատ է հետաքրքրում: Մենք

կարծում եմք, որ բարոյական հարցերում մեր կայացրած յուրաքանչյուր որոշում ազդում է հասարակության ճակատագրի վրա…

Դեյվիդ Հյում[7]

Այս մեթոդական հնարը նույնիսկ կարելի է դարձնել ավանդույթ, ներգրավել նաև աշակերտներին: Ամեն օրվա համար կարելի է առանձնացնել որևէ աֆորիզմ, գրել գրատախտակին, առաջարկել աշակերտներին, որ երբեմն նաև իրենք բերեն նմանատիպ աֆորիզմներ կամ թևավոր խոսքեր:

Դասի խթանման փուլում սա ասելով կամ գրատախտակին գրելով՝ գրավեցինք աշակերտների ուշադրությունը, հետաքրքրեցինք նրանց: Այնուհետև կազմակերպեցինք փոքր քննարկում: Սա միանշանակ որոշակի արժեքների ձևավորման հիանալի միջոց է, նաև զարգացնում է մշակութային կարողունակությունը. աշակերտները ծանոթանում են տարբեր ազգության հայտնի գրողների մտքերին կամ զանազան թևավոր խոսքերի ու աֆորիզմների:

«Բարդ նախադասություն» թեման ուսումնասիրելիս բավական հաճախ ենք կատարում տեքստային առաջադրանքներ: Արժեհամակարգի ձևավորմանն ուղղված կարևոր քայլերից է ճիշտ ու բովանդակալից տեքստի ընտրությունը: Մեր կողմից դասագրքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանում ներառված են այնպիսի տեքստեր, որոնցով աշխատանքը կարող է բերել որոշակի արդյունքի: Սակայն նմանատիպ տեքստերը փոքր թիվ են կազմում (մոտ քսան տեքստ): Հիմնականում տրված են տարբեր ստեղծագործություններից վերցված նկարագրական հատվածներ, որոնք, իհարկե, նպաստում են սովորողի ստեղծագործական մտածողության ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, սակայն դա լիարժեք բավարար չէ: Դասագրքի այս պակասը ուսուցիչը պետք է լրացնի լրացուցիչ տեքստերով, համապատասխան մեթոդներով ու մեթոդական հնարներով: Բերենք մեր կողմից կազմված լրացուցիչ տեքստի մեկ օրինակ, որը կիրառվել է դասի ժամանակ՝ իմաստի ընկալման փուլում :

---

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 25:

Մենամարտի ավարտին մնացել էին հաշված բոպեներ: Հայ բռնցքամարտիկը պարտվողի կարգավիճակում էր: Ոչ ոք արդեն չէր հավատում նրա հաղթանակին, ու կարծես ինքն էլ արդեն վստահ էր, որ պարտվել է: Հանկարծ նրա հայացքն ընկավ հանդիսատեսի վրա: Նրանք դեռ մեծ թափով երկրպագում էին իրենց մարզիկին: Հեռվում նշմարեց նաև Հայաստանի դրոշը, որը կարծես իրենից պահանջում էր սթափվել ու շարունակել մարտը: Մարզիկի մտքին ակամա եկավ մի ասացվածք «Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի»: Այդ բոլոր մարդիկ, որ հավաքվել էին դահլիճում, երկրպագում էին իրեն. ուրեմն ինքն էլ պարտավոր էր արդարացնել նրանց սպասելիքները: Հայ մարզիկը սեղմեց բռունցքը ու արագ թափով վեր կացավ տեղից: Այս մարզիկի առաջ արդեն անգոր էր մրցակիցը: Հաղթանակը հայ բռնցքամարտիկինն էր: Որոշ ժամանակ անց արդեն մրցանակը հանձնվեց նրան: Սակայն այս մրցանակը միայն իրենը չէր: Նա քայլերն ուղղեց դեպի հանդիսատեսը ու իր օձիքից ներքև փայլող մեդալը հանձնեց նրանց. չէ՞ որ նրանց օգնությամբ էր հասել այս բարձունքին:

Տեքստի շուրջ **իմաստի ընկալման փուլում** իրականացրինք «Վեց գլխարկ» մեթոդը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս հասնել միանգամից մի քանի խնդրի լուծման: Մեթոդն իրականացնելու համար դասարանը հարկավոր է բաժանել վեց խմբի, սակայն մեր պարագայն դա հնարավոր չեղավ՝ աշակերտների փոքր թվի պատճառով (երկու աշակերտ): Խնդրին լուծում տալու համար որոշեցինք վարվել հետևյալ կերպ: Ուսուցչի սեղանին դրված էին վեց տարբեր գույնի գլխարկներ: Աշակերտները հրահանգ ստացան իրենց նախընտրությամբ վերցնել դրված վեց գլխարկներից երկուսը: Արդյունքում աշակերտները վերցրին սպիտակ, կարմիր, դեղին և կապույտ գույները և սկսեցին կատարել համապատասխան առաջադրանքները

Սպիտակ գլխարկ:

«Կրելով» սպիտակ գլխարկը՝ տվյալ անդամը դառնում է պատասխանատու քննարկման թեմայի շուրջ տարբեր փաստերի և ինֆորմացիայի համար:

- համացանցի օգնությամբ ներկայացնել մեր մարզիկների հաջողությունները բռնցքամարտում,
- տեքստից դուրս գրել բարդ նախադասությունները:

Կարմիր գլխարկ

«Կրելով» կարմիր գլխարկը՝ մասնակիցները արտահայտում են իրենց կարծիքը՝ հիմնված իրենց զգացմունքների և նախազգացումների վրա:

- Դուրս գրել տեքստի՝ իրենց կարծիքով գլխավոր նախադասությունը՝ մեկնաբանելով ընտրությունը,
- Առանձնացնել հասկացություններ, որոնք կբնութագրեն տեքստի բովանդակությունը (հայրենասիրություն, նվիրվածություն և այլն)՝ դարձյալ մեկնաբանելով բառերի ընտրությունը:

Դեղին գլխարկ

«Կրելով» դեղին գլխարկը՝ տվյալ անձը նշում է քննարկվող թեմայի բոլոր առավելությունները:

- Մարզիկի կերպարը,
- Հայ ժողովրդի միասնականությունը՝ ի դեմս հանդիսատեսի:

Կապույտ գլխարկ

«Կրելով» կապույտ գլխարկը՝ տվյալ անդամը դառնում է պատասխանատու քննարկման ղեկավարման և դրան կողքից հետևման համար:

- Հետևում է, որ ելույթ ունենալիս մասնակիցները իրենց խոսքում կիրառեն առնվազն երկու բարդ նախադասություն:

Քննարկման ավարտին սովորողները կարևորում և յուրացնում են առանցքային արժեքներ, ինչպես նաև տարբերակում են բարդ նախադասությունները: Կիրառված մեթոդը նաև նպաստում է սովորել սովորելու(սովորողները ինքնուրույն տեղեկատվություն են հավաքում և յուրացնում), մեդա և թվային(համացանցից վերցնում են տեղեկատվական նյութեր, վերլուծում, տարբերակում են դրանք), լեզվական (կառուցում են բանավոր և գրավոր խոսք), ինքնաճանաչողական (ինքնուրույն կատարում են որոշակի առաջադրանքներ՝ արդյունքում գիտակցելով իրենց ուժեղ կողմերը այս կամ այն իրադրության մեջ) կարողունակությունների ձևավորմանը:

Իմաստի ընկալման փուլում հետաքրքրական է «Հին պայուսակ» մեթոդի կիրառությունը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս խորհրդանշական պայուսակի պարունակության միջոցով ներկայացնելու սեփական անձը: Մասնակիցը պատկերացնում է, թե ունի մի հին պայուսակ, որի մեջ պետք է դնի երեք իր՝ մեկն իր անցյալը, մեկն իր ներկան և վերջինն իր ապագան բնորոշող: Այնուհետև ելույթի ժամանակ մասնակիցը պետք է հիմնավորի՝ ինչու է ընտրել հատկապես այդ երեք առարկաները: Այս մեթոդը սովորողի լեզվական, մտածական և տրամաբանական ունակությունները միավորող և բացահայտող հրաշալի միջոց է: Սովորողը պետք է կարողանա ընտրել որոշակի խորհրդավորություն ունեցող իրեր, այնուհետև կարողանա իր մտքերը ճիշտ կազմակերպել, համապատասխան արտահայտություններ ընտրել, որպեսզի համոզի ու գրավի լսարանին: Մեր դասի հետ առնչությունն ապահովելու համար սովորողների առաջ դրված էր պայման՝ խոսքը կառուցել միայն բարդ նախադասություններով: Բերենք դասի ժամանակ աշակերտներից մեկի ելույթը.

Ես իմ անցյալը բնութագրելու համար ընտրել եմ ադավնին, քանի որ անցյալում ես ապրում էի խաղաղության մեջ, ապրում էի իմ ծննդավայրում՝ Արցախում, և՛ միտքս էր խաղաղ, և՛ կյանքս: Իմ ներկան բնութագրելու համար ընտրել եմ կռունկը, որը պանդխտության խորհրդանիշն է: Ես էլ հիմա պանդուխտ եմ, կտրված եմ իմ ծննդավայրից: Իմ ապագան բնութագրելու համար ընտրել եմ փյուռկ թռչունին, քանզի

համոզված եմ՝ մեր բգկտված հայրենիքը վեր է հառնելու մոխիրներից՝ փյունիկի նման և ես վերադառնալու եմ իմ հայրենի հող՝ Արցախ:

Կշռադատման փուլում կիրառված մեթոդներից էր «Վեց բառից պատմվածք՝ ըստ Հեմինգուեյի» մեթոդը: Սովորողը մի պահ իրեն պատկերացնում է որպես հայտնի գրող և փորձում ամփոփել դասը վեցբառանոց նախադասությամբ: Այս հնարը վերցված է Հեմինգուեյի հայտնի վեցբառանոց պատմվածքից՝ «Վաճառվում են նորածնի կոշիկներ, հագած չեն» (For sale: baby shoes, never worn.): Այս մեթոդը ունի որոշակի ճանաչողական նշանակություն, քանի որ աշակերտները բացահայտում են, որ կա նմանատիպ պատմվածք: Բացի այդ այն զարգացնում է մտածողությունը. աշակերտները պետք է լարեն իրենց ուղեղը, որպեսզի կարողանան հենց վեց բառից կազմված այնպիսի նախադասություն մտածել, որ ամփոփի ողջ դասը:

Դասի այս փուլում կիրառել ենք նաև մեր կողմից մշակված «Ախտորոշում» մեթոդը: Աշակերտները մի պահ իրենց պատկերացնում են բժիշկների դերում և փորձում են «ախտորոշում տալ» նախադասություններին: Այսինքն՝ նրանք թվարկում են նախադասությունների «ախտանիշները»՝ բնորոշ հատկանիշները (մեկ միտք է արտահայտում, թե մեկից ավելի, մեկ ստորոգյալ ունի, թե մի քանի և այլն) և ըստ դրա տալիս համապատասխան «ախտորոշում»՝ որոշելով, թե նախադասությունը պարզ է, թե բարդ: Այս մեթոդը նախ ստեղծում է առարկայական կապ կենսաբանության հետ, նաև սա կարող է նպաստել մասնագիտական կողմնորոշմանը (ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն):

Նշված մեթոդների կիրառությունը և ստացված արդյունքները գնահատելով՝ փորձեցինք պարզել, թե որքանով են դրանք բերում ցանկալի արդյունքին: Ունեցանք հետևյալ պատկերը:


32%
18%
50%
Ամբողջովին արդյունավետ են և լիարժեք բերում են սպասված արդյունքին (Վեց բառից պատմվածք՝ ըստ Հեմինգուեյի, Ախտորոշում, Հին պայուսակ):
Հիմնականում արդյունավետ են, սակայն կիրառման ժամանակ առաջ են բերում որոշակի խնդիրներ (Վեց գլխարկ):
Կատարում են իրենց առաջ դրված առաջնային խնդիրը(խթանում), սակայն թույլ են արժեհամակարգի ձևավորման գործում (Գուշակություն, Մեջբերումներ):

Եզրակացություններ

1. Կրթության գործընթացում գիտելիքի յուրացումը չի կարող և չպետք է լինի միակ ցանկալի վերջնարդյունքը: Կրթության գերագույն նպատակը պետք է լինի անձ-քաղաքացու լիարժեք ձևավորումը, ով կունենա անհրաժեշտ բոլոր հմտությունները կյանքում գործելու և հաջողակ լինելու համար:
2. «Վեց բառից պատմվածք՝ ըստ Հեմինգուեյի», «Ախտորոշում», «Հին պայուսակ» մեթոդները արդյունավետ են, նպաստում են արժեքների, որոշակի կարողունակությունների յուրացմանը: Նշված մեթոդներից առաջին երկուսը կիրառվում են կշռադատման փուլում, իսկ վերջինը՝ իմաստի ընկալման:
3. «Վեց գլխարկ» մեթոդը հիմնականում արդյունավետ է, բազմակողմանի և ընդգրկման առումով բավական լայն, սակայն կիրառման մեջ որոշակի դժվարություններ է առաջացնում՝ կապված առաջադրանքների բազմատիպության հետ: Այս մեթոդը նպատակահարմար է կիրառել կշռադատման փուլում:
4. Խթանման փուլի համար բավական արդյունավետ են «Գուշակություն» և «Մեջբերումներ» մեթոդները, նպաստում են ուշադրության գրավմանը, հետաքրքրության խթանմանը, սակայն դրանք արժեհամակարգի ձևավորման գործում այնքան էլ չեն արդարացնում իրենց:
5. Ժամանակակից մեթոդները, ճիշտ և նպատակային կիրառության դեպքում, հնարավորություն են տալիս նպաստել սովորողի արժեհամակարգի ձևավորմանն ու կարողությունների յուրացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայոց լեզու ծրագիր հանրակրթական դպրոցի 7-12-րդ դասարանների համար, https://escs.am/files/files/2020-07-17/0c0bec6bd1b12c6389919925ac049d7e.pdf:
2. Թորգոմյան Լ., Մանկավարժության արժեբանության հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Եր., «Ան-Ջոն» հրատ.,2011, էջ 106-129:
3. Ա.Գալստյան, Մ.Գյուրունյան, Հուշագրական նյութերի ուսումնասիրումը որպես կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման միջոց:
4. Հայոց լեզու ,գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Եր., Անտարես, 2006, էջ 4-11 :
5. ՀՀ կառավարության որոշումը հի կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի n 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, 09.02.2021, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149788:
6. Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 23-24:

Հավելված 1

Դասի պլան

Ուսուցչուհի՝ Մերի Հախյան

Առարկա՝ Հայոց լեզու

Դասարան՝ 9-րդ

Թեմա՝ Գոյականական անդամի լրացում ստորադաս նախադասություններ

Դասի տեսակ՝ նոր նյութի հաղորդման

Դասի տևողություն՝ 45 րոպե

Դասի նպատակները.

Դասի ավարտին սովորողը՝

✓ կամրապնդի բարդ նախադասությունների մասին ունեցած իր գիտելիքները,

✓ կձևավորի խմբի ներսում աշխատելու կարողություն,

✓ կծանոթանա նյութի վերաբերյալ լեզվաբանների տեսակետներին,

✓ կկատարի բառապաշարի հարստացման աշխատանքներ,

✓ ինքնուրույն եզրահանգումներ կանի և կկազմի նախադասություններ,

✓ կընկալի որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ ստորադաս նախադասությունները և դրանց բնորոշ առանձնահատկությունները,

✓ կհասկանա որոշիչ և բացահայտիչ երկրորդական նախադասությունների տարբերությունները:

Ուսումնական նյութեր.

Դասագիրք, աղյուսակներ, քարտեր, գրիչ:

Կիրառվող մեթոդները.

Խմբային աշխատանք, «Հնարավոր նախադասություններ», տեքստային աշխատանք, «Վեց /r-երի ռազմավարություն», «Դասախոսություն», «Ծաղիկ», Ախտորոշում», «T-ձև աղյուսակ», «Վեց բառից պատմվածք՝ ըստ Հեմինգուեյի», «Դիագրամների բուրգ»:

Դասի ընթացքը՝ ԽԻԿ համակարգ

Խթանում (10 րոպե)

Իմաստի ընկալում (20-25 րոպե)

Կշռադատում (10-15 րոպե)

Դասի ընթացքը՝ ԽԻԿ համակարգ

Խթանման փուլ

Քայլ 1. Նախապես աշակերտներին հանձնարարում ենք լեզվաբանական գրքերից դուրս գրել գոյականական անդամի լրացում երկրորդական նախադասություններին վերաբերող նյութեր: Սա ընթերցվում է խթանման փուլի ընթացքում: Այնուհետև դասարանը բաժանում ենք երեքական խմբերի: Յուրաքանչյուր խումբ վերցնում է հավաքված նյութերից մի հատված և սկսում աշխատանք իրականացնել դրա շուրջ: Խմբի աշակերտներին տրվում են հետևյալ հանձնարարականները:

- Կազմել հարցեր տրված նյութի վերաբերյալ:
- Կազմել տրված նյութից բխող օրինակներ:
- Յուրացնել նյութը՝ ներկայացնելու համար:

Յուրաքանչյուր հանձնարարական կատարում է խմբի մեկ անդամը: Այնուհետև տրվում է որոշակի ժամանակ աշխատանքները ներկայացնելու համար: Աշակերտների հավաքած նյութին կարող է նաև որոշ լրացումներ անել ուսուցիչը՝ առավել ամբողջական պատկեր ստանալու համար: (5 րոպե)

Քայլ 2. Կիրառում ենք **«Հնարավոր նախադասություններ»** մեթոդը: Տրվում են գոյականական անդամի լրացում ստորադաս նախադասության կաղապարներ, և հանձնարարվում է կազմել նախադասություններ: (5 րոպե)

Մեզ դեմ հանդիման եկավ այն մարդը,

Որ(ը)

(ո՞ր մարդը)

Մենք վերցրինք նրա գիրքը,

Ով

(ո՞ւմ գիրքը)

Եկողը,

Ով

(այսինքն ո՞վ)

Իմաստի ընկալման փուլ

Քայլ 1. Կիրառում ենք **«Ծաղիկ»** մեթոդը: Գրում ենք մի բառ և հանձնարարում դրան ավելացնել հատկացուցիչներ և որոշիչներ՝ այդպիսով ձևավորելով «ծաղիկ»: Ստացված բառակապակցությունները փորձում են դարձնել ստորադաս նախադասություններով կառույցներ: (4 րոպե)



Քայլ 2. Տրվում է բնագիր:

Գեղեցկադեմ, արիասիրտ երիտասարդ էր Պարթևաց աշխարհի թագադիր և զորապետ Սուրենը. ոչ մի հաղթանդամ պարթև չէր կարող մրցել այս **քաջի** հետ: Հագնում էր շքեղ պատմուճան ՝ ծիրանաթույր և ականակուռ, քայլում էր անհոդդոդդ քայլվածքով ՝ **հայացքն** առանց աջ ու ահյակ ուղղելու: Նա , Օրոդես արքայի գլխին թագ դնելով, դարձել էր նրա ՝ պալատում ամենավստահելի մարդը: Սուրենը իրեն պահում էր արքայի նման. հրովարտակներ և ուղերձներ էր ուղարկում տարբեր երկրների թագավորներին,շքերթների կամ որսի դուրս գալիս հազար թիկնապահ էր ուղեկցում նրան: Զնայած նրա երեսունը դեռ չէր լրացել, այնուամենայնիվ նա շատ **հարներ** ուներ: Երբ Կրասոսը Ասիա հասավ, Սուրենի խորհրդով Օրոդեսն սկսեց նախապատրաստվել կռվի: Դրանիկներին և սեպուհներին հանձնարարել էր հետևել իր վարձած **լրտեսներին** և չմոռանալ «Ակն ընդ ական» արտահայտությունը: Սուրենը նախօրոք իմացավ՝ Հայոց աշխարհի **գահակալ** Արտավազդը երբ և ինչպես գնաց Անտիոք , ինչի մասին

զրուցեց Կրասոսի հետ: Նրա **մարդիկ** զինվել էին սաղավարտներով, ասպարներով, աշտեներով և սպասում էին հարձակման հրամանի:

Կիրառվում է **«Վեց /-երի ռազմավարություն»** մեթոդը: Հղվում է վեց հարց, որոնց պատասխանելով՝ աշակերտները տեքստի թավ գրված բառերին լրացումներ կտան և այդպիսով նախադասությանը կավելացնեն որոշիչ ստորադաս նախադասություններ:



Աշխատանքն ավարտելուց հետո հանձնարարվում է բնագրում ավելացնել մեկական հատկացուցիչ և բացահայտիչ ստորադաս նախադասություններ: (6 րոպե)

Քայլ 3. Կիրառում ենք **«Դասախոսություն»** մեթոդը: Աշակերտներին ներկայացվում են որոշիչ և բացահայտիչ ստորադաս նախադասությունների տարբերությունները, ինչում աշակերտները հաճախ դժվարանում են: Ուսուցիչը պետք է հստակ ճշի այն տարբերությունները, որոնց հիման վրա պետք է տարբերել այս երկու տիպի նախադասությունները: (5 րոպե)

Քայլ 4. Կիրառում ենք **«Ախտորոշում»** մեթոդը: Աշակերտներին տրվում են նախադասություններ՝ որոշիչ և բացահայտիչ ստորադաս կապակցություններով, և պահանջվում է տալ դրանց ախտորոշումը:

1. Նա շտապով բաց արեց երկրորդ նամակը, որտեղ պիտի գտներ վաղեմի հիշատակների ջերմ զգացմունքներ (էջ 129):

2. Մցխեթը, որ վրաց երկրի մայրաքաղաքն էր, այդ ժամանակ ներկայաց-նում էր մի ազգաստ ավան (էջ 125):

Միաժամանակ կազմում են **Տ-ածև աղյուսակ**, որում լրացնում են ճշված երկու տիպի նախադասությունների բնորոշ առանձնահատկությունները: (5 րոպե)

Որոշիչ ստորադաս նախադասություններ	Բացահայտիչ ստորադաս նախադասություններ

Քայլ 5. Կատարում ենք խմբային աշխատանք: Յուրաքանչյուր խմբին տրվում են նախադասություններ և հանձնարարվում է եռաթև աղյուսակում տարբերակել դրանք՝ ըստ ստորադաս նախադասության բնույթի՝ փակագծերում ճշելով նաև կապակցման միջոցը: (5 րոպե)

Որոշչային ստորադաս նախադասություն	*Հատկացուցչային ստորադաս նախադասություն*	*Բացահայտչային ստորադաս նախադասություն*

Կշռադատման փուլ

Քայլ 1. Կիրառում ենք **«Վեց բառից պատմվածք՝ըստ Հեմինգուեյի»** մեթոդը: Աշակերտներին հանձնարարում ենք վեցբառանոց նախադասությամբ փորձել ներկայացնել «Գոյականական անդամի լրացում ստորադաս նախադասություններ» թեման: (5 րոպե)

Քայլ 2. Կիրառում ենք **«Դիագրամների բուրգ»** մեթոդը: Սա դիագրամներից կառուցված բուրգ է, որը մանր եզրույթներից կամ օրինակներից բարձրանում է մինչև բուն երևույթի անվանումը: Այս մեթոդը նպատակահարմար ենք գտնում կիրառել կշռադատման փուլում, քանի որ այն անցած ողջ նյութը կրկնելու հիանալի միջոց է և ընդգրկում է երևույթի ամբողջական բացահայտումն ապահովելու համար անհրաժեշտ բոլոր բաղադրիչները: (5 րոպե)



Տնային առաջադրանք՝

Նյութի ընկալումը ստուգելու և միևնույն ժամանակ իմացածն ամրապնդելու համար հանձնարարվում է առաջադրանք – վարժությունների համակարգ։

1. Ընդգծե՛ք ստորադաս նախադասությունները։ Որոշե՛ք դրանց բնույթը։

Նա ունի լայն հակատ, որ լուսնի տակ պղնձագույն է երևում։

Առաջին կանգնողը, որ Արտաշեսն էր, հարցրեց, թե որտեղ են հանձնում հավաքած մետաղը։

Հետո ծլում և մեծանում է լայնեզր, ճեղքված տերևներով քեղը, որի տերևի կպած տեղի մրմռում է։

Այնքան էին զանազան նրանց լեզուները, որոնց Աթանեսն անվանում էր շան լեզվով խոսողներ։

2. Տրված գերադաս նախադասություններին ավելացնել որոշիչ ստորադաս նախադասություններ։

Մենք նրան գտանք այն օրը, _____:

Մնացին կանգնած միայն նրա որդիները, _____:

Ահա այս մեկը փռել է սառած թևերը, _____:

Նայում էին Արարատյան դաշտին, _____:

3. Ընդգծե՛ք հատկացուցիչ ստորադաս նախադասությունները։

Ազատվել էին միայն ութ ձի, որոնց վրա բարձել էին մնացած ձիերի համետները։

Ջեռին թղթի կտոր էր, որի վրա գրված էին ձիու գինը և նրա նախկին տիրոջ ազգանունը։

Հատուկտոր թփերը ապացույց էին, թե ժամանակին մարգագետնի սևահողերում աճել է կաղնին։

Հավելված 2

Դասի պլան

Ուսուցչուհի՝ Մերի Հախյան

Առարկա՝ Հայոց լեզու

Դասարան՝ 9-րդ

Թեմա՝ Բարդ նախադասություն

Դասի տեսակ՝ նոր նյութի հաղորդման

Դասի տևողություն՝ 45 րոպե

Դասի նպատակները.

Դասի ավարտին սովորողը՝

✓ կյուրացնի Բարդ նախադասություն թեման,

✓ կձևավորի ինքնուրույն գիտելիքի յուրացման կարողություն,

✓ կկազմի բանավոր և գրավոր խոսք, կարտահայտի իր սեփական կարծիքը,

✓ կկատարի բառապաշարի հարստացման աշխատանքներ,

✓ կսովորեն կողմնորոշվել տեղեկատվական դաշտում:

Ուսումնական նյութեր.

Դասագիրք, աղյուսակներ, տետրեր, համացանց, գրիչ:

Կիրառվող մեթոդները.

«Գուշակություն», «Բանալի բառեր», «Զրույց», «Վեց գլխարկ», «Հին պայուսակ», «Ախտորոշում», «Հինգրոպեանոց շարադրանք»:

Դասի ընթացքը՝ ԽԻԿ համակարգ

Խթանում (10 րոպե)

Իմաստի ընկալում (20-25 րոպե)

Կշռադատում (10-15 րոպե)

Խթանման փուլ

Քայլ 1. Կիրառում ենք «Գուշակություն» մեթոդը առած-ասացվածքների միջոցով: (5 ր.)

Քայլ 2. Կիրառում են «Բանալի բառեր» մեթոդը: Գրատախտակին գրում ենք նոր դասից բառեր, արտահայտություններ, նախադասությունների օրինակներ և աշակերտները փորձում են դրանց հիման վրա ձևակերպել թեմայի հիմնական հասկացությունները կամ սահմանումները: Նրանց ասածները գրի են առնվում գրատախտակին հետագա օգտագործման համար: (5 ր.)

Իմաստի ընկալման փուլ

Քայլ 1. «Զրույց» մեթոդով ամփոփում ենք խթանման փուլի առաջադրանքները: «Բանալի բառեր» մեթոդի կիրառումից հետո գրատախտակին գրված արտահայտությունները քննարկում է ուսուցիչը, հենց դրանց հիման վրա բացատրում նոր նյութը: (5 ր.)

Քայլ 2. Կատարում ենք տեքստային աշխատանք «Վեց գլխարկ» մեթոդով: (15 ր.)

Քայլ 3. Կիրառում ենք «Հին պայուսակ» մեթոդը: (5 ր.)

Կշռադատման փուլ

Քայլ 1. Կիրառում ենք «Ախտորոշում» մեթոդը: (5 ր.)

Քայլ 1. Հանձնարարում ենք «Հինգբոպեանոց շարադրանք»: Աշակերտները շարադրում են, թե ինչ վերցրին դասից, ինչն էր հետաքրքիր, հասկանալի և ինչը բաց մնաց: (5 ր.)

Տնային առաջադրանք: Գեղարվեստական գրականությունից դուրս գրել բարդ նախադասություններ, որոշել դրանցում բաղադրիչ նախադասությունների քանակը: